# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<13>> հոկտեմբերի 2020թ. N ԱՊ/420-2020

*ք. Արմավիր*

### *ԱՍՏՂԻԿ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ <<ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ N1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 122-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 123-րդ հոդվածով, 226-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2020 թվականի հոկտեմբերի 7–ի N01/13/06194-2020 գրությունը և <<Վաղարշապատի Մ.Մաշտոցի անվան N1 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Մխիթարյանի 2020 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 12 գրությամբ ներկայացված բացատրությունը, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 16-րդ մասի պահանջները չպահպանելու, Ա. Մխիթարյանի նկատմամբ վստահությունը կորցնելու պատճառով.

***որոշում եմ՝***

1. Աստղիկ Մխիթարյանին ազատել <<Վաղարշապատի Մ.Մաշտոցի անվան N1 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2019 թվականի հուլիսի 24-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

***ՄԱՐԶՊԵՏ՝*** ***Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ***

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 13.10.2020 17:40:59 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230